Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Մ.Մնսրոպյանը

ք.Հրազդան 09.12.2020թ. ժամը 11.00

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝

Ա.Բաղրամյան- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար
ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման աշխատակիցներ
Վ.Աբրոյան-<<Կոտայք>> ՋՕԸ գործադիր տնօրեն

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Ա.Ավետիսյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավարային զորակոչին առնչվող հարցեր:
/զեկուցող՝ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Արթուր Բաղրամյան/

2. Սուրվենցիոն ծրագրերի շրջանակներում համայնքներում իրականացված աշխատանքների մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ավետիսյան/

3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման վիճակը 2020թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Մ.Պետրոսյան/

4. Ոռոգման ջրի մատակարարման և վարձավճարների գանձման վիճակը մարզի համայնքներում:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/

5. Այլ հարցեր

Լ.ՍԵՑԻՆ՝

1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Արթուր Բաղրամյանի զեկույցը պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչին առնչվող հարցերի վերաբերյալ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Անընդհատյա ուշադրության կենտրոնում պահել պատերազմի հետևանքով առաջացած առաջնահերթ խնդիրների լուծման գործընթացը:

-Գործուն օժանդակություն ցուցաբերել առաջիկայում նախատեսված պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչի կազմակերպման, մասնավորապես կցագրման աշխատանքներին:

2. ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ավետիսյանի զեկույցը սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համայնքներում իրականացված աշխատանքների մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-2020թ. մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերը պատշաճ կատարելու նպատակով առանձնահատուկ ուշադրություն դարձնել շինարարական աշխատանքների որակին, ընթացքին և ժամկետներին:

-Ներկայացնել ռազմական դրությամբ պայմանավորված որոշ սուբվենցիոն ծրագրերի՝ 2021թ. տեղափոխման հիմնավորումները:

-Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքների համապատասխան փաստաթղթերը՝ մինչև ֆինանսական տարվա ավարտը վճարման գործընթացն իրականացնելու նպատակով:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Մ.Պետրոսյանի զեկույցը 2020թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման վիճակի մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել գործուն քայլեր սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը բարելավելու ուղղությամբ:

-Բացատրական աշխատանքներ տանել բնակիչների հետ աղբահանության վճարների հավաքագրման գործընթացն ակտիվացնելու նպատակով:

-Բյուջեում կատարվող համամասնությունների փոփոխությունները ներկայացնել նաև մարզպետարան:

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանի զեկույցը համայնքներում ոռոգման ջրի մատակարարման և վարձավճարների գանձման վիճակի վերաբերյալ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Համատեղ պայքար մղել ապօրինի ջրօգտագործման դեպքերը բացառելու նպատակով:

5. Այլ հարցեր

-Անդրադարձ արվեց տեղահանված և ժամանակավորապես Կոտայքի մարզում բնակություն հաստատած արցախցիների խնդիրներին:

-Համայնքներում էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կապված հարցերին:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Շարունակել արդյունավետ համագործակցությունը՝ Արցախից ժամանած մեր հայրենակիցներին գործուն աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

-Հավաքագրել, ամփոփել և ներկայացնել համայնքներում էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կապված խնդիրները:

Մ.ՄԵՍՐՈՊՅԱՆ

09.12.2020թ.

Զեկույց
Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ

2020 թվականի 11 ամիսների կտրվածքով մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակների գծով կատարվել է 87,6%-ով: Նախատեսված 2857229,3 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 2502485,2 հազար դրամ,կամ թերակատարվել է 354744,1 հազար դրամով:

Այժմ սեփական եկամուտների հավաքագրումը ըստ առանձին հարկատեսակների:

1. Գույքահարկ – Կատարողականը՝ 89,3%: Նախատեսված 1536692,8 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1372171,0 հազար դրամ:

Գույքահարկի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Գառնի (57.7%), Գողթ (63,1%), Գեղաշեն (69,4%), Կաթնաղբյուր (53,5%) և Պառոշյան (59,7%) համայնքներում:

2. Հողի հարկ - Կատարողականը՝ 83.3%: Նախատեսված 372.225,2 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 310.185,5 հազար դրամ:

Հողի հարկի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Գեղարդ (34,6%), Սոլակ (55,8%), Գետամեջ (43,5%), Գեղաշեն (57,8%), Կաթնաղբյուր (57,5%) և Վերին Պտղնի (59,2%) համայնքներում, որտեղ ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ չեն գերազանցում 60.0 տոկոսը, ինչը միանշանակ բավարար արդյունք չէ:

3. Տեղական տուրքեր- Կատարողականը՝ 102,8%: Նախատեսված 165315.5 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 170.015,6 հազար դրամ:

Տեղական տուրքերի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Գետամեջ (58,7%) և Նոր Գեղի (68.6%) համայնքներում:

4. Պետական տուրքեր- Կատարողականը՝ 84%: Նախատեսված 60.700,0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 50.992,9 հազար դրամ:

5. Հողի և գույքի վարձակալական վարձավճարներ- Կատարողականը՝ 89,1%: Նախատեսված 213.949,0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 190.713,5 հազար դրամ:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարների գծով առավել ցածր կատարողականներ են արձանագրվել Վերին Պտղնի, Նոր Արտամետ, Գեղաշեն, Քաղսի, Գեղարդ, Քարաշամբ, համայնքներում, որտեղ տոկոսներով արտահայտված կատարողականը տատանվում է 4-59.0%-ի միջակայքում:

Առաջարկվում է վերանայել ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված այս մասով վարձակալության բոլոր պայմանագրերը, իրականացնել աշխատանքներ հավաքագրումն կատարելու մասով, և հետագայում հնարավորինս հավաքագրումները հասցնել 100 տոկոսի:

6. Աղբահանության վճարներ- Առաջադրանքը կատարվել է 80,3%-ով: Նախատեսված 508.346,9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 408.406,8 հազար դրամ:

Աղբահանության վճարների գծով առավել ցածր կատարողականներ արձանագրվել են մարզի Լեռնանիստ՝ 9,2%, Քաղսի՝ 8,6%, Գողթ՝ 14,5%, համայնքներում:

Առաջարկվում է բոլոր համայնքների ղեկավարներին ակտիվացնել հավաքագրման գործընթացը, բացատրական աշխատանքներ տանել համայնքի բնակիչների հետ աղբահանության վճարների հավաքագրումը բարելավելու նպատակով:

Եթ համայնքի ղեկավարներն ունեն առաջարկություններ, հավաքագրման արդյունքների վերաբերյալ անհամաձայնություններ, խնդրում եմ բարձրաձայնել, իսկ եթե ընթացքում կատարվել են բյուջեի համամասնությունների փոփոխություններ, տեղեկացնում եմ, որ անմիջապես այդ համամասնությունները՝ փոփոխված տարբերակով, ուղարկեք մեզ, որպեսզի մեր կողմից էլ կատարվեն այդ փոփոխությունները:

Ֆինանսական և սոցիալ տնտեսական
զարգացման վարչության պետի պաշտոնակատար՝ **Մ.Պետրոսյան**

Ոռոգման ջրի մատակարարման

և վարձավճարների գանձման վիճակը

Ինչպես գիտեք, Կոտայքի մարզում ոռոգման ջրի մատակարարումը հիմնականում իրականացվում է Կոտայք ՋՕԸ-ի միջոցով, որն ընթացիկ տարում իրականացրել է պայմանագրերի կնքում:

01.12.20թ.

Անվանումը	**2019թ.**	**2020թ.**
Պայմանագրերի քանակ	22 117	21 632
Ոռոգելի հողատարածք	7 652.5 հա	7 650 հա
Ջրառ /հազ. խմ/	63 581.0	64 116.7
Ջրտուք /հազ. խմ/	36 536.2	38 711.4
Հասույթ /հազ. դրամ/	385 850.9	418 212.3
Գանձումը /հազ. դրամ/	307 049.9	301 629.4
Գանձման տոկոս	80	72

Սեզոնի ընթացքում, իհարկե, առաջացել են որոշակի խնդիրներ ջրի մատակարարման հետ կապված, սակայն դրանք ժամանակին հնարավորինս սեղմ ժամկետներում վերացվել են, և ջրի մատակարարումը վերականգնվել է: Նախորդ տարվա համեմատ մատակարարվող ջրի ընդհատումները պակասել են, որը արդյունք է համայնքների և մատակարար ընկերության համագործակցված աշխատանքի:

Առկա խնդիրների վերաբերյալ. որոնցից են շուրջօրյա /գիշերային/ ոռոգման ջրի օգտագործումը, մատակարարված ջրի /գյուղացուն հասած/ հաշվառումը, որը դեռևս շատ համայնքներում իրականացվում է տարերայնորեն /այսինքն հեկտարներով և ոչ թե խորանարդ մետրով/: Կորուստների մակարդակը նվազեցնելու նպատակով օրախնդիր է ներտնտեսային ցանցերի աշխատանքների իրականացումը՝ հնարավորինս ավելացնելով ներդրումների քանակը տվյալ ուղղությամբ:

Անհրաժեշտ է խրախուսել կաթիլային ոռոգման ներդրումը, որի արդյունքում ջրի օգտագործումը միավոր տարածքի հաշվով կտնտեսվի 6-8 անգամ: Ամենակարևորներից է նաև ապօրինի ջրօգտագործման երևույթների դեմ պայքարը, որը պետք է իրականացնել համատեղ՝ բոլորիս մասնակցությամբ:

Գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝ Մ. Եղիազարյան

Տեղեկանք

Գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ 01.12.2020թ.

Մարզում գործում են 32108 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Մարզի հողային հաշվեկշիռը հետևյալն է՝ գյուղ.նշանակության հողեր՝ 154622,1 հեկտար, այդ թվում՝ վարելահողեր՝ 37708.4 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 2779.6 հեկտար, խոտհարք՝ 11257,0 հեկտար, արոտներ՝ 78922.0 հեկտար, այլ հողատեսքեր՝ 23843,1 հեկտար:

Այսօրվա դրությամբ կատարվել է 3495 հեկտար աշնանացան հացահատիկի ցանք՝ մինչև աշնանացանի ավարտը այն կհասցվի 4100 հեկտարի, նախորդ տարվա 3509 հեկտարի դիմաց: Գյուղացիական տնտեսությունների կողմից 2020 թվականի բերքի տակ կատարվել է 13690 հա ցանք, այդ թվում՝ աշնանացան ցորեն-3509 հա, գարնանացան ցորեն-116 հա, գարնանացան գարի-3239 հա, այլ հացահատիկ/հաճար/-2323 հա, հատիկաընդեղեն-226 հա, տեխնիկական մշակաբույսեր- 58.5 հա, կարտոֆիլ- 637 հա, բանջար- 905 հա, կերային մշակաբույսեր/ ներառյալ անցյալ տարիների ցանքը/- 2255.4 հա:

Մարզում դրական տեղաշարժերից առանձնապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի և հատապտղի արտադրության ավելացումը: Ընդհանուր առմամբ ջերմոցների տարածքը կազմում է 91.5 հա, որից բանջարեղենի արտադրություն՝ 44,28 հա /Ձորաղբյուր, Նոր Գեղի, Հրազդան/, ծաղիկի արտադրություն՝ 39,22 հա/Մայակովսկի, Գողթ/, ելակի արտադրություն՝ 8 հա /Նոր Գեղի, Ակունք, Կամարիս/: Ընթացիկ տարում գյուղացիական տնտեսությունների կողմից օպերատիվ տվյալներով արտադրվել է՝ հացահատիկ և ընդեղեն-13931 տոննա, կարտոֆիլ- 11200տոննա, բանջար-10500 տոննա, պտուղ- 11000 տոննա, կուտակվել է՝ խոտ-26200տոննա, ծղոտ- 9500տոննա: Մարզում առկա է 3149 հա պտղատու այգի, որից 630 հա ինտենսիվ , դրանից 308 հա հիմնվել է նորագույն տեխնոլոգիաներով / հակակարկտային ցանց, կաթիլային ոռոգում և այլն/: Ինտենսիվ այգիներից հակակարկտային ցանցով ապահոված է 40 հա, կաթիլային եղանակով ոռոգվում է 376 հա: 2020թվականին մարզում հիմնվել է 25 հեկտար պտղատու այգի և 3,7 հեկտար ջերմոց : Մարզում առկա է 27 հակակարկտային կայան, որից հինգը տեղադրվել է նախորդ տարում /երկուսը՝ համայնքային միջոցներով, երեքը՝ ՀՀ կառավարության որոշմամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից/, որոնք հանձնված են ԱԻՆ-ի համապատասխան կառավարմանը: Տեղադրման ընթացքի մեջ է ևս 7 կայան Եղվարդ համայնքում:

Ընթացիկ տարում նախորդ տարվա համեմատ արձանագրվել է անասնագլխաքանակի աճ՝ մասնավորապես խոզերի և թռչունների, համապատասխանաբար՝ 18 և 28 տոկոսով: Ըստ անասնաբուժական ծառայության կողմից ներկայացված տվյալների՝ այս պահին ընթանում են գյուղատնտեսական կենդանիների արյան նմուշառման և կանխարգելիչ հակահամաճարակային միջոցառումների իրականացման աշխատանքները: Ըստ վիճակագրական կոմիտեի ներկայացված տվյալների՝ հուվար- սեպտեմբեր ամիսներին արտադրվել է՝ միս-9.4 հազ. տոննա, կաթ-58.6 հազ տոննա, ձու- 143.7 մլն. հատ, որը համապատասխանաբար անցած տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած կազմում է՝ միս 122.1 տոկոս, կաթ 100.7 տոկոս, ձու 136 տոկոս: Մարզում առկա է ԽԵԿ, ՄԵԿ և խոզերի սպանդանոցային մորթ իրականացնող 5 կազմակերպություն, որոնցից մեկն ունի ընթացիկ նորոգման կարիք, թռչնի 2 սպանդանոց, որոնք վերապրոֆիլման գործընթացում են՝ միաժամանակ խոզի մորթ

կազմակերպելու նպատակով, 11 փոքր սպանդանոց, որոնք գործում են առանձին ֆերմերային տնտեսություններին կից՝ սեփական գլխաքանակի մորթը կազմակերպելու նպատակով: Վերջիններից չորսը պատրաստ են այլ կազմակերպություններից ընդունելու անասնագլխաքանակ՝ սպանդանոցային մորթ իրականացնելու համար: Սպանդանոցներից չորսը գտնվում է Աբովյանի, մեկը՝ Հրազդանի, երկուսը՝ Նաիրիի տարածաշրջանում: Կոտայքի մարզում առկա մսի իրացման կետերի, մսի շուկաների և մսամթերքի արտադրամասերի քանակությունների վերաբերյալ՝ ըստ տարածաշրջանների.

N	Տարածաշրջանը	մսի իրացման կետեր	մսի շուկաներ	մսամթերքի արտադրամասեր
1	Նայրի	17	0	0
2	Կոտայք	41	1	5
3	Հրազդան	26	1	0
	Ընդամենը	84	2	5

Գործող սպանդանոցների հզորությունը թույլ է տալիս մարզի ֆերմերային տնտեսությունների կողմից սպանդի ենթակա անասնագլխաքանակի մորթը ժամանակին կազմակերպելու համար: Անհրաժեշտություն կա 3 շարժական սպանդանոցի ներմուծման՝ արոտային սեզոնին հեռագնա արոտներում կամ հեռավոր գյուղերում սպանդանոցային մորթ կազմակերպելու համար:

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարության և մոնիթորինգի վարչության Կոտայքի բաժնի կողմից ստացված տվյալների՝ 01.12.2020 թվականի դրությամբ մարզի 942 շահառու դիմել է Գյուղատնտեսության պետական աջակցության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին և անցել համապատասխան առցանց հավաստագրման փուլը: Հայտատու շահառուների հիմնական մասը պատրաստվում է միջոցներ ներդնել անասնապահության բնագավառում, իսկ մյուս մասը՝ դաշտավարություն, այգեգործություն, ջերմատնային տնտեսություն և այլ ոլորտներում: Ընթացքի մեջ է խելացի գոմերի կառուցման ծրագիրը:

Ընթացիկ տարում առանձնակի հետաքրքրություն կա ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների, խաղողի այգիների և հատապտղանոցների հիմնման համար իրականացվող աջակցության ծրագրերի նկատմամբ: Ծրագրի շահառուների թիվը մարզում 8-ն է, վերջիններս փոխհատուցման բաղադրիչի հայտ են ներկայացրել: Աճում է հետաքրքրությունը նաև ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի հանդեպ, որից օգտվելու հայտ է ներկայացրել 3 քաղաքացի և ստացել համապատասխան փոխհատուցում: << Կոտայք >> ՋՕԸ կողմից 01.12.2020թ. դրությամբ կնքվել է 21632 պայմանագիր, ոռոգելի տարածքը կազմել է 7650 հեկտար , ջրառը կազմել է 64116.7 հազ.խմ , ջրտուքը ՝ 38711.4 հազ.խմ, հասույթը՝ 418212.3 հազ.դրամ, գանձումը՝ 301629.4 հազ.դրամ, գանձման տոկոսը՝ 72%:

Գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝ **Մ. Եղիազարյան**